Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է
մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ
2024-2025 ուսումնական տարվա ընդունելություն

Ընդունելության դիմում-հայտը լրացվում է տեղում՝ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում:

Դիմում-հայտին կցվող փաստաթղթերի ցանկը.

1. բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնօրինակն ու պատճենը,
2. 4 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
3. ինքնակենսագրություն,
4. անձը հաստատող փաստաթուղթը և պատճենը,
5. զինվորական ծառայության առնչության վերաբերյալ փաստաթուղթը և պատճենը (առկայության դեպքում),
6. հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը (դրանց առկայության դեպքում),
7. ՀՀ օրեսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթուղթը և պատճենը (հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք, եթե հավակնորդը I կամ II խմբի հաշմանդամ է, մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողազուրկ, զոհված զինծառայողի երեխա լինելու մասին փաստաթղթեր),
8. Ընդունելության ծառայությունների համար 5000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ, ք.Երևան, Ալ. Մանուկյան 11, ՀՎՀՀ 01505821, ԱյԴի Բանկ «Վարդանանց մասնաճյուղ», Հ/Հ 11817065324000

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 28-ը (ներառյալ), ժամը 09:00-17:30, ընդունելության հարցազրույցը՝ **հոկտեմբերի 30-ին**:

Դիմումները ներկայացնել հետևյալ հասցեով՝
ք.Երևան, Ալեք Մանուկյան 11, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժին, հեռ.՝ (010) 55-33-10 (1-64):